



**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ЕГУ**

**АНИ САРГСЯН
АЛЕКСАНДР САФАРЯН
ЛУСИНЕ СААКЯН**

УЧЕБНИК ОСМАНСКО-ТУРЕЦКОГО ЯЗЫКА

Под редакцией
Академика НАН РА, профессора
РУБЕНА САФРАСТЯНА

(На армянском языке)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ՕՍՄԱՆԵՐԵՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Խմբագրությամբ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 811.512.16 (075.8)

ԳՄԴ 81.2 Թու ց73

Ս 259

**ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ՈՐՊԵՍ ԴԱՄԱԳԻՐՔ ԲՈՒՀԵՐԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ (2016թ. նոյեմբերի 22 Հր. 1199-Ա/2)**

*Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ գիտական խորհրդի կողմից*

Գրախոսներ՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր

Գուրգեն Մելիքյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արսեն Ավագյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վարդան Ոսկանյան

Սարգսյան Ա.

Ս 259 Օսմաներենի դասագիրք / Ա. Սարգսյան, Ալ. Սաֆարյան, Լ.
Սահակյան; խմբ.՝ Ռ. Սաֆրաստյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2016,
324 էջ:

Սույն բուհական դասագիրքը նախատեսված է ԵՊՀ Հայագիտական հետազո-
տությունների ինստիտուտում, արևելագիտության և պատմության ֆակուլտետնե-
րում օսմաներենի դասավանդման համար: Այն բաղկացած է ներածությունից, երեսու-
ներկու դասից՝ նվիրված օսմաներենի բառագիտության, հնչյունաբանության, քերա-
կանության հարցերին: Դասագրքում ներառված են համապատասխան տեքստեր,
տարաբնույթ վարժություններ, օսմաներեն-հայերեն ուսումնական բառարան:

ՀՏԴ 811.512.16 (075.8)

ԳՄԴ 81.2 Թու ց73

ISBN 978-5-8084-2156-1

© ԵՊՀ հրատ., 2016

© Անի Սարգսյան, 2016

© Ալեքսանդր Սաֆարյան, 2016

© Լուսինե Սահակյան, 2016

Օսմաներենի դասագրքի հրատարակության առթիվ

Հայ արևելագետները թե՛ խորհրդային շրջանում և թե՛ հատկապես նորանկախ Հայաստանում արևելյան լեզուների դասագրքերի ստեղծման ուղղությամբ կատարել են հիրավի ակնառու գործ: Հրատարակվել են պարսկերենի, արաբերենի, եբրայերենի, ասորերենի, աղորբեջաներենի դասագրքեր: Արդեն վեց հրատարակություն է ունեցել մեր թուրքագետների ստեղծած (հայաստանյան իրականության մեջ առաջին) թուրքերենի բուհական դասագիրքը: Հիշարժան և հույժ արժեքավոր են նաև վերջին տարիներին տպագրված «Օսմանյան կայսրության պատմություն» և «Թուրքիայի հանրապետության պատմություն» դասագրքերը:

Համալսարանական օսմանագետների հեղինակած «Օսմաներենի դասագրքի» հրատարակությունը ևս մեկ առիթ է նորանոր հաջողություններ մաղթելու օտար (մասնավորապես՝ արևելյան) լեզուներ ուսումնասիրող մեր սիրելի ուսանողներին և հորդորելու ԵՊՀ դասախոսներին՝ կրկնապատկելու ու եռապատկելու դասագրքերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծմանը նպատակաուղղված ջանքերը:

ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ

*ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր
Երևան, 2016թ.*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օսմաներենը (Osmanlıca, لسان عثمانی) մասնագետների գերակա մեծամասնության բնութագրմամբ թուրքերենի՝ օսմանյան դարաշրջանում քաղաքական վերնախավի և մտավորականության՝ «որպես գրավոր լեզու» օգտագործած ձևն է¹: Նախկին Խորհրդային Միության ու ռուսաստանյան արևելագետները նաև նշում են, որ գրական թուրքերենի պատմության մեջ 15-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը ներառող շրջանը սովորաբար առանձնացվում է *Osmanlıca* (Օսմաներեն) անվանումով, որոշ հետազոտողներ նույնիսկ կարծում են, որ հնարավոր է խոսել յուրահատուկ՝ վերոհիշյալ դարաշրջանի «գրական լեզվի գրավոր տարատեսակի մասին՝ հաշվի առնելով ժանրային-ոճական տարբերակումը»²:

Օսմանյան կայսրությունը, հիմնադրվելով 1299թ., իր հզորության գագաթնակետին է հասել 15-16-րդ դարերում: Հարկ է նշել, որ նախապես Սելջուկյան սուլթանության, իսկ այնուհետև՝ Օսմանյան կայսրության, ինչպես նաև ակ-կոյունլուների և կարա-կոյունլուների պետական կազմավորումների մեջ համախմբված օղուզական ու թուրքմենական ցեղերն արաբերեն ու պարսկերեն լեզուների բարդ ազդեցությունը կրել են թե՛ վերոհիշյալ թուրքական ցեղերի և արաբների ու պարսիկների միջև անմիջական շփումների արդյունքում՝ ժողովրդա-

¹ Sté u Anabritannica (Genel Kültür Ansiklopedisi), Cilt 24, İstanbul, 1994, s. 329:

² Э. А. Грушина, Учебное пособие по османско-турецкому языку, Москва, 1988, стр. 3: Sté u և հմմտ. N. Koç, Yeni Dilbilgisi, İstanbul, 1996, s. 49, R. Rahmeti Arat, Türk Şivelerinin Tasnifi, Türkiyat Mecmuası, Cilt X, (1951-1953), İstanbul, 1953, s. 122-123:

կան լեզվի միջոցով վերոհիշյալ լեզուների տարրերի յուրացման, և թե՛ օղուզ-թյուրքերի կողմից իսլամի ընդունումից (IXդ.) հետո կրոնի «գիտական ու գեղարվեստական գրականության գործոններով պայմանավորված արաբապարսկական լեզվական «օկուպացիայի» միջոցով³:

Օսմաներենը, հիրավի, յուրահատուկ լեզու էր, և թյուրքական լեզուների պատմության հիմնահարցերի ժամանակակից ուսումնասիրողների կարծիքով էլ երեք կենդանի լեզուների (թյուրքական ոլորտից դուրս՝ նախադեպ չունեցող) համակեցության բնույթ էր կրում՝ հանդիսանալով մեկ լեզվական հանրության լեզու: Միննույն ժամանակ հարկ է նշել, որ այն որպես սովորական կենդանի շփման միջոց հասու էր միայն օսմանյան վերնախավին: Օսմաներենին անդրադարձող հեղինակների գործերում գրեթե «ավանդական պատկեր» է դարձել եվրոպական հայտնի արևելագետ Վամբերիի (1831-1913 թթ.) բերած խոստուն օրինակը. թուրք ծառան լսում ու չի հասկանում իր տիրոջ և մի այլ ուսյալ թուրքի զրույցը, քանզի նրանք խո-

³ Օսմաներենի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների, թուրքիայում լեզվական բարեփոխման մասին հսկայածավալ գրականությունից մասնավորապես տե՛ս *Из истории турецкого языка* (Предисловие) – **А. Н. Баскаков** и др., *Турецко-русский словарь*, Москва, 1997, стр. 5-8, **А. Н. Кононов**, *Очерк истории изучения турецкого языка*, Москва, 1976, стр. 68-69. Օսմաներենի «հաղթահարման» և նոր գրական թուրքերենի կայացման հարցերի մասին տե՛ս նաև **Л. Н. Старостов**, *Из истории становления турецкого литературного языка* (Османский период). – *Современные литературные языки стран Азии*, Москва, 1965, стр. 192-206, ինչպես նաև **Ալ. Մաֆարյան**, *Զիա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները»*, Երևան, 2012, էջ 54-68, 86-92:

սում էին ոչ թե ժողովրդական լեզվով (թուրքերեն), այլ՝ օսմաներեն⁴:

Օսմաներենի «համակեցությունը» ներառել էր ոչ միայն փոխառություններ արաբական ու պարսկական բառապաշարից, այլև արաբերենի ներքին կազմավորման կամ «բեկված» հոգնակին (cemi mükesser), նաև արաբերենի հոգնակի թվի -at, -in, -iyun, -un-ով ձևերը «պարսկերենի՝ -an, -ane-ով կազմվող ձևերը, երկակի թվի, գոյականի սեռի կատեգորիաները, որոնք հակասում էին թուրքերենի ձևաբանական տիպին, դերբայների ու մասդարների գուտ սեմական համակարգը, պարսկական իզաֆեթը... Վերջապես արաբերենն ու պարսկերենն ազդել էին օսմաներենի հնչյունական համակարգի վրա, խարխլել թյուրքական լեզուներին բնորոշ ձայնավորների ներդաշնակությունը⁵: Ի տարբերություն կցական թուրքերենի՝ օսմաներենը լեզվի պատմության հետազոտողների կողմից բնորոշվել է որպես «սեմա-թեքական-կցական լեզու»⁶:

⁴ Տե՛ս **Н. К. Дмитриев**, Турецкий язык, Москва, 1960, стр. 11, **Л. Н. Старостов**, նշվ. աշխ., էջ 195-196: Օսմանյան ժամանակաշրջանում տարբերակվել են՝ «Fasih Türkçe» («մաքուր թուրքերենը», օսմաներենը, որն ընդունված էր հասարակության «ընտրանու» կողմից), «Orta Türkçe» («միջին թուրքերենը» կամ «կիսաօսմաներենը», որով խոսել է «միջին խավը») և «Kaba Türkçe» («կոպիտ կամ գոեհիկ թուրքերենը», այսինքն՝ բուն թուրքերենը՝ բարբառային և «ռամկական» խոսվածքի յուրահատկություններով): Տե՛ս նույն տեղում, էջ 196: Բարձրաճ օսմաներենի քննադատությունը և ժողովրդախոսակցական թուրքերենի ջատագովությունը թյուրքականության դիրքերից տե՛ս **Ziya Gökalp**, Türkçülüğün Esasları, Dördüncü Basılış, İstanbul, 1961, էջ 22, **С. Kudret**, Ziya Gökalp, Ankara, 1963, էջ 16-21:

⁵ **С. Майзель**, Арабские и персидские элементы в турецком языке, Москва, 1945, **Н. К. Дмитриев**, նշվ. աշխ., стр.198-199:

⁶ Մանրամասն տե՛ս **Л. Н. Старостов**, նշվ. աշխ., էջ 199, **Н. К. Дмитриев**, նշվ. աշխ., էջ 11, 198-199, ինչպես նաև **Ա. Սաֆարյան**, Քեմալականների

Արևելագետներն ավանդաբար առանձնացնում են օսմաներենի զարգացման երեք հիմնական՝ «հին օսմաներենի» (Eski Osmanlıca) - 13-15-րդ դդ., «միջին օսմաներենի» (Orta Osmanlıca) - 15-19-րդ դդ., «նոր օսմաներենի» (Yeni Osmanlıca) - 19-20-րդ դդ. փուլերը⁷:

Լեզվական բարեփոխումների (գրական լեզվի պարզեցման, ժողովրդախոսակցականին մոտեցման) առանձին փորձեր օսմանյան իրականության մեջ եղել են արդեն միջնադարում⁸: 16-րդ դարում «պարզ թուրքերենի» համար պայքարում էին Թաթավլալը Մահրեմին (Tatavlı Mahremî, մահ. 942 հ./1535 թ.) և Էդիրնելի Նազմին (Edirneli Nazmî, մահ. 962 հ./1554 թ.): Թաթավլալը Մահրեմիի իդեալն էր այնպիսի թուր-

լեզվական քաղաքականության ակունքներում, Զիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքները, «Ժամանակակից Եվրասիա», (խմբ.՝ Ռ. Սաֆարասյան), հ. III (2), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 52-76:

⁷ Տե՛ս և հմմտ. **Faruk K. Timurtaş**, Osmanlı Türkçesi Grameri, III, İstanbul, 2005, s. 2, **Э. А. Грунина**, նշվ. աշխ., էջ 3-4, Anabrittannica (Genel Kültür Ansiklopedisi), Cilt 24, s. 329-330: Թուրքերենը պատկանում է օղուզական լեզուների օղուզ-սելջուկյան ենթախմբին, լեզվի կրողները՝ «անատոլիական» թուրքերը (Türk, ռուս.՝ турок), կոչվել են «օսմանցի» կամ «օսմանյան թուրք» (Osmanlı, ռուս.՝ османские турки, оттоманские турки, оттоманы), իսկ ռուսաստանյան ու հետխորհրդային մյուս երկրների թուրքագիտության մեջ արմատացած ձևակերպմամբ թուրքերը, որպես ժողովուրդ, գոյություն ունեն միայն 13-րդ դարի վերջից: Տե՛ս **А. Н. Баскаков**, Введение в изучение тюркских языков, Москва, 1962, стр. 225-226, տե՛ս և հմմտ. նաև **Г. А. Благова**, Вариантные заимствования тюрко-тюрк и их лексические обособление в русском языке (К становлению обобщающего имени тюркоязычных народов), - «Тюркологический сборник», Москва, 1973, стр. 51-61: Հմմտ. նաև **Դ. Ե. Երեմեն**, Թուրքերի ծագումը (Ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները), Երևան, 1975, էջ 164-209:

⁸ Մասնավորապես տե՛ս **Faruk K. Timurtaş**, Tarih İçinde Türk Edebiyatı, Vilâyet Yayınları, İstanbul, 1981, s. 81-86, **А. Н. Кононов**, նշվ. աշխ., էջ 63-64:

քերենը, որի ոչ միայն բառային կազմն էր թուրքական, այլև «բոլոր այլաբանություններն ու համեմատություններն էին համապատասխանում թուրքերի ճաշակին և թուրքերենի հանճարին»⁹:

Օսմանյան կայսրությունում օսմաներենի քերականության դասավանդումը ոյուշթիեններում (դպրոցներում) սկսվել է 1839 թ., մինչդեռ օսմաներենի առաջին «քերականությունը» գրվել էր դեռևս 1530 թ. (հեղինակ՝ Բերգամալը Քադրի): 1846 թ. լույս է տեսել թուրք քերական Աբդուրահման Ֆեզլիի աշխատությունը: 1851 թ. Ստամբուլում Ֆուադ էֆենդին և Ջևդեր էֆենդին հրատարակում են «Օսմաներենի կանոնները» (“Kavaid-i Osmaniye”) քերականության համառոտ տեսությունը. թուրք էվրոպացի բազմաթիվ թուրքագետ-լեզվաբանների կողմից հետազայում բազմիցս հղված այս ուսումնասիրության մեջ նկատվում են լեզվի պարզեցմանն ուղղված միտումներ: Հատկանշական է, որ այս դարաշրջանում թուրք հեղինակների ուսումնասիրությունները կրում էին առավելապես դպրոցական «քերականություն-դասագրքերի» բնույթ, որոնց հիմքում արաբական լեզվաբանության ավանդույթներն ու սխեմաներն էին¹⁰:

Լեզվական բարեփոխումների խնդիրը հատուկ կարևորեցին Իբրահիմ Շինասիի (1826-1871թթ.), Նամըք Քեմալի (1840-1888թթ.) և նրանց կողմնակիցները: Թուրքերենի պար-

⁹ Տե՛ս **M. F. Köprülü**, Milli Edebiyat Cereyanının İlk Mübeşirleri ve Divani Türkî-i basit, XVI-ncı Asır Şairlerinden Ederneli Nazmînin eseri, İstanbul, 1928, s. 14, 19, (արաբատառ) Milli Edebiyat Cereyanını İlk Mübeşirlerinden Mahremî, «Hayat Mecmuası», 1928, IV, s. 82, ինչպես նաև **А. Н. Кононов**, նշվ. աշխ., էջ 64:

¹⁰ **А. Н. Кононов**, Грамматика современного турецкого литературного языка, Москва-Ленинград, 1956, стр.12-13.

զեցման գործում զգալի դեր է խաղացել «Մուհբիր» պարբերականը, որտեղ հրատարակված հոդվածների ճնշող մեծամասնության լեզուն համեմատաբար պարզ էր՝ հագեցած ժողովրդախոսակցական լեզվի տարրերով: Նշանավոր «Թաքվիմ-ի վեքայի» և «Մուհբիր» պարբերականների միջև, ոուսաստանյան օսմանագետ Ա. Դ. Ժելտյակովի գնահատմամբ, առկա էր անդունդ ոչ միայն բովանդակության, այլև բառապաշարի և ոճի տեսանկյուններից, քանզի «Մուհբիր»-ում տպագրված բազմաթիվ հոդվածներ ընթերցողներից չէին պահանջում լեզվական բարձր պատրաստվածություն: Հատկանշական է, որ «Մուհբիր»-ի հրատարակիչներն ու հեղինակները հետաքրքրվում էին նաև արաբատառ այբուբենի մասնակի բարեփոխման խնդրով: 1868 թ. օգոստոսի 3-ի համարում խմբագրակազմը հավանություն է տալիս ընթերցանությունը հեշտացնող նշանների ներդրման ծրագրին՝ միաժամանակ ընդգծելով, որ ամենևին պետք չէ փոխել այբուբենն այն աստիճան, որ սերունդները գրկվեն անցած դարերի ընթացքում գրված կամ տպագրված գրքերը կարդալու հնարավորությունից¹¹: Թեև 19-րդ դարի երկրորդ կեսի հրատարակությունների մեծ մասում թուրքերի մայրենի լեզուն շարունակվում էր կոչվել «օսմաներեն», բայց միայն 1877-1890 թթ. տպագրված առնվազն տասը գիրք կազմի վրա կրում էր «թուրքերեն» անվանումը (*թուրքչե, լիսան-ի թյուրքի, քավաիդ-ի թյուրքչե, սարֆ-ի թյուրքի*): Լեզվի ու մամուլի պատմաբանները նշում են, որ նման քերականագիտական ու թարգմանական աշխատանքը նպաստում էր թուրքերենի

¹¹ Ст'я А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908гг.), Москва, 1972, стр. 111-112:

կատարելագործմանն ու հարստացմանը¹²:

«Մերվերթի Ֆյունուն» գրական միավորման և հրատարակվող նույնանուն հանդեսի շուրջը համախմբված «երիտասարդ» մտավորականների խմբի՝ գրական օսմաներենը ժողովրդախոսակցականին մոտեցնելու փորձերը ցանկալի արդյունք չէին տալիս¹³: Լեզվի «թյուրքականացման» համար մղած պայքարը նորովի շարունակեցին երիտթուրքերը¹⁴: Մեզայի բեյը «Շուրայ-ի ումմեթ» պարբերականի էջերում հանդես էր գալիս ի պաշտպանություն ժողովրդին հասու լեզվի, կոչ էր անում գրողներին հրաժարվելու թուրքական միջնադարյան գրականության ստեղծագործությունների խրթին լեզվից՝ պնդելով, որ դա թուրք ժողովրդի լուսավորության կարևորագույն նախապայմանն է¹⁵: Թյուրքականության նշանավոր գաղափարախոս Զիյա Գյոքալփը «Թյուրքականության հիմունքները» հիմնարար աշխատությունում հիշում է, թե ինչպես Սալոնիկում հրատարակվող «Գենչ Քալեմեր» հանդեսի խմբագրից տեղեկացել է, որ վերոհիշյալ հանդեսը փորձում էր հեղաշրջում կատարել լեզվի ասպարեզում, իսկ այդ պայքարը ղեկավարում էր հետազայում մեծ ճանաչում ստացած գրող

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 201: Օսմանյան առաջին (1876թ.) և երկրորդ (1908թ.) սահմանադրությունների մեջ ամրագրված էր թուրքերենի՝ որպես պետական լեզվի մասին դրույթը (տե՛ս և հմմտ. **A. Dilaçar**, Devlet Dili Olarak Türkçe, էջ 19):

¹³ Տե՛ս **А. Н. Кононов**, Очерк истории изучения турецкого языка, стр. 68:

¹⁴ Տե՛ս **Ю. Петросян**, Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.), Москва, «Наука», 1971, стр. 275.

¹⁵ Տե՛ս **Ş. Mardin**, Jön Türklerin Siyasi Fikirleri, 1895-1908, Ankara, 1964, s. 201, ինչպես նաև **Ю. Петросян**, նշվ. աշխ., էջ 275:

Օմեր Սեյֆեդդինը (1884-1920 թթ.), ում պրպտումները համահունչ էին գյոքալիյան լեզվաբանական հայացքներին¹⁶:

Մուսթաֆա Քեմալի ու քեմալականների կողմից իրագործված հիրավի արմատական բարեփոխումների տեսական հիմքերը մշակող Ջիյա Գյոքալիը հատուկ ընդգծում էր, որ օսմաներենում «շատ փոքր» էր թուրքերենի ու թուրքական մշակույթի բաժինը և օսմաներենը որակում էր որպես հասարակ թուրք ժողովրդին միանգամայն խորթ «քաղաքակրթության լեզու»¹⁷: Թուրքիայի հանրապետությունում «լեզվական հեղափոխության» (Dil Devrimi) հիմնահարցերի ուսումնասիրողներն Աթաթյուրքի ու քեմալականների՝ լեզվի բնագավառում իրականացրած արմատական բարեփոխումների նպատակներն ավանդաբար փորձում են ամփոփել հետևյալ դրույթներում. թուրքերենը մաքրել օսմաներենի «վնասակար անհարթություններից», լեզվին հաղորդել ազգամիավորիչ բնույթ՝ փակելով օսմաներենի պատճառով ձևավորված ճեղքվածքը մտավորականության ու ժողովրդի գործածած լեզվի, խոսակցական ու գրական լեզուների միջև¹⁸:

¹⁶ Տե՛ս **Ziya Gökalp**, նշվ. աշխ., էջ 10:

¹⁷ Տե՛ս **Ziya Gökalp**, նշվ. աշխ., էջ 23: Լեզվական բարեփոխումները Թուրքիայում ժամանակի հրամայական պահանջն էր, սակայն ինչպես գրել է աղբյուրներից հետազոտող Է. Հասանովան, «իրենց ընդհանուր բնույթով առաջադիմական միջոցառումները հաճախ օգտագործվում էին... պանթյուրքական նպատակներով»: Այդ մասին մանրամասն տե՛ս **Э. Гасанова**, Идеология буржуазного национализма в Турции, Баку, 1966, стр. 94-95:

¹⁸ Մանրամասն տե՛ս **R. Korkmaz**, Dil Bilincimizin Serüveni veya Bir Varlık Alanı olarak Türkçe ve Atatürk, “Türk Dili” (Dil ve Edebiyat Dergisi), Sayı 580, 2000 / I, s. 325-326, ինչպես նաև **Ա. Սաֆարյան**, Քեմալականների լեզվական քաղաքականության ակունքներում. Ջիյա Գյոքալիի լեզվաբանական հայացքները, էջ 52-53:

1928 թ. օգոստոսի 8-ին գործողության մեջ մտավ թուրքական գրերն արաբատառից լատինատառի փոխելու մասին օրենքը: Մուսթաֆա Քեմալը, Ստամբուլում խոսելով «թուրքական գրերի հեղափոխության» (Türk Yazı İnkilâbı) մասին ու ներկայացնելով «Ճշմարիտ-իրական-իսկական»¹⁹ թուրքերեն բառերով, «թուրքական տառերով» իր գրառումները, կոչ արեց հանրապետական Թուրքիայի ընտրանուն ջանք չխնայել հնարավոր ամենակարճ ժամանակահատվածում նոր այբուբենը ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը դարձնելու գործընթացում²⁰:

Ժամանակակից գրական թուրքերենի հիմքում ընկած են Ստամբուլի և Անկարայի քաղաքային խոսվածքները (գրական ընդհանուր նորմի ազդեցությունն են կրում նաև մյուս խոսվածքները)²¹:

* * *

Թուրքերենը և օսմաներենը Երևանի պետական համալսարանում դասավանդվում են անցյալ դարի 40-ական թվականներից՝ մեծանուն արևելագետ և հայագետ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի նախաձեռնությամբ²², սակայն օսմաներե-

¹⁹ Բնագրում՝ *hakikî*:

²⁰ St' u Atatürk'ün Söylev ve Demeçleri, II (1906-1938), İkinci Baskı, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1959, ss. 251-253. А. Н. Кононов, Реформа алфавита в Турции (к истории вопроса), История и филология стран Востока, Учен. Зап., Ленинград, 1959, № 282:

²¹ St' u А. Н. Баскаков, Введение в изучение тюркских языков, стр. 226:

²² St' u Գ. Մելիքյան, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պատմությունից, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), հ. VIII, Երևան, 2014, էջ 5-8, А. Симонян, А. Сафарян, Об изучении вопросов тюркской филологии в Армении, - Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики, Казанский (Приволжский) Федеральный Университет, Казань, 2015, стр. 245-246:

նի դասավանդման համար տասնամյակներ շարունակ մեր դասախոսներն օգտագործել են Թուրքիայում կամ Ռուսաստանում հրատարակված դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, համապատասխան բառարաններ²³։ Անշուշտ, թուրքերեն-հայերեն կամ օսմաներեն-հայերեն (կամ հայերեն-օսմաներեն) բազմաթիվ բառարաններ, օսմանահպատակ հայերի ուսուցման համար նախատեսված տարաբնույթ դասագրքեր են հրատարակվել Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի հանրապետությունում²⁴։ Հիշարժան է օսմանագիտության մոսկովյան դպրոցի հիմնադիր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկու վկայությունն այն մասին, որ ինքը Մոսկվայի Լազարյան ինստիտուտում օսմաներենը սկսել է սովորել օսմանահպատակ հայ գրահրատարակիչ Առաքելի (Թոզլյանի) տպագրած Մուալլիմ Նաջիի դասագրքով²⁵։ Հի-

²³ Մասնավորապես տե՛ս **А. Н., Самойлович**, Краткая учебная грамматика османско-турецкого языка, Ленинград, 1925, **Э. А. Грунина**, Учебное пособие по османско-турецкому языку, **F. Timurtaş**, Osmanlı Türkçesi Grameri III, 11. Baskı, İstanbul, 2005, **H. Develi**, Osmanlı Türkçesi Kılavuzu 1-2, İstanbul, 2007:

²⁴ Տե՛ս **Մ. Աբիկեան**, Ընդարձակ բառարան Տաճկերեն հայերեն, Կ. Պոլիս, 1892, **Պ. Զեքի Կարապետյան**, Մեծ բառարան Օսմաներեն Հայերեն, Կ. Պոլիս, 1912, *ünijih*՝ Մեծ բառարան Հայերեն Օսմաներեն, Կ. Պոլիս, 1907, **Պոհճալեան Հ. Արիստակես վրդ.**, Թրքերեն հայերեն առձեռն բառարան, Կ. Պոլիս, 1981, **Bedros Zeki**, Türkçeden Ermeniceye Mükemmel Lügat, Ankara, 2009, *ünijih*՝ Ermeniceden Türkçeye Mükemmel Lügat, Ankara, 2009:

²⁵ Տե՛ս **В. В. Гордлевский**, Избранные сочинения, т. III (История и культура), Москва, 1962, стр. 165-167, տե՛ս նաև **Հ. Աճառյան**, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, (աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադյանի), Երևան, 1999, էջ 9-22: Սույն հրատարակության հիմքում Հրաչյա Աճառյանի՝ 1943 թ. ԵՊՀ-ի գիտական նստաշրջանում կարդացած զեկուցումն է և առաջին անգամ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (1967, № 1, էջ 157-163) կրճատումներով հրատարակված հոդվածը: Տե՛ս նաև **Բ. Մ. Թուղլաճյան**, Հայկական տպագրությունն Օսմանյան կայսրությունում և հայերու նպաստը թուրքական տպագրական արվեստին, Մերձավոր և Միջին

շարժան է նաև Հրաչյա Աճառյանի վկայությունն Օսմանյան կայսրությունում հայ գործիչների դասագրքաստեղծ ավանդի մասին. «Նույնիսկ տաճկերեն լեզվի համար առաջին եվրոպական ռճով ու նոր մեթոդով դասագրքերը հայերը պատրաստեցին: Այսպես՝ Միհրան Աբիկյանը, Ռեթիկ հոջան, Սարայդարյանը և Զեքի Կարապետյանը, որոնց պատրաստած դասագրքերը տաճկական դպրոցներում գործածության դրվեցին.... Միհրան Աբիկյանը 50 անուն դասագիրք է գրել («Մութավվել սարֆի Օսման»)»²⁶:

Անդրադառնալով խորհրդահայ արևելագիտության պատմությանն՝ ակնածանքով ու հիացմունքով ենք հիշում մեր ականավոր աղբյուրագետների՝ Կոստանդնուպոլսի համալսարանի շրջանավարտ, հայաստանյան օսմանագիտության ակունքներում կանգնած Արամ Սաֆրաստյանի (1888-1966թթ.)²⁷ և պրոֆեսոր Հակոբ Փափագյանի (1919-1997թթ.)²⁸ բացառիկ գի-

Արևելքի ժողովուրդներ XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 98-114, **Գ. Մելիքյան, Ալ. Սաֆարյան**, Ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկին՝ հայագիտական հիմնահարցերի մասին, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), հ. VII, Երևան, 2012, էջ 148:

²⁶ **Հ. Աճառյան**, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, (աշխատասիրությամբ՝ Պ. Մուրադյանի), էջ 21-22: Հատկանշական է, որ այս աշխատության մեջ հեղինակը նաև վկայում է. «Ռեթիկ հոջան այնպիսի հմուտ տաճկագետ էր, որ տաճիկ մոլլաները գալիս էին չոքում նրա մոտ և տաճկերեն սովորում»: Նույն տեղում, էջ 22:

²⁷ Ա. Խ. Սաֆրաստյանի աշխատասիրությամբ հրատարակություններից մասնավորապես տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, Երևան, 1961, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Երևան, 1961, Թուրքական աղբյուրներ. Էվլիյա Չելեբի, հ. Գ, (կազմ.՝ Ա. Խ. Սաֆրաստյան, Գ. Հ. Սանթրոքյան), Երևան, 1972:

²⁸ **Հ. Դ. Փափագյանի** օսմանագիտական հրապարակումներից մասնավորապես հիշարժան են հետևյալները. Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ.

տամանկավարժական վաստակը: Անուրանալի է նաև հայ օսմանագիտության անդաստանում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի բազմամյա գիտաշխատող Ավետիս Փափազյանի²⁹ և ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում շուրջ երկու տասնամյակ օսմաներեն և թուրքերեն դասավանդած թուրքագետ, գրող, հրապարակախոս Խաչիկ Ամիրյանի³⁰ ավանդը:

Թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», հ. 5, առանձնատիպ, Երևան 1960, էջ 431-464, Կուլբենկի որդիներ Գուլաբիի և Գալուստի 1847 թ. սուլթան Աբդուլ Մեջիդից ստացած արտոնագրերը, - «Բանբեր Մատենադարանի», ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 212-228, ինչպես նաև նույնի՝ Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ, - «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1994, № 16, էջ 197-213:

²⁹ Ա. Փափազյանի աշխատասիրությամբ լույս տեսած հրատարակություններից մասնավորապես տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, (Առաջաբանը, թարգմանությունը, ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի), Երևան, 1988, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999: Ա. Փափազյանը հեղինակել է նաև համեմատաբար համառոտ «Օսմաներենի ձեռնարկ» (Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VIII, խմբ.՝ Մ. Խաչիկյան, Ռ. Սաֆրաստյան, Երևան, 2012), որն ամփոփում է ներածություն, ընթերցանության կանոններ, քերականական որոշ տեղեկություններ և տեքստեր: Վերոհիշյալ ներածության մեջ հեղինակը օսմաներենը բնութագրում է որպես «արաբատառ թուրքերեն» և «Օսմանյան կայսրության գրագրության պաշտոնական լեզու», տե՛ս նույն տեղում, էջ 6:

³⁰ Արժեքավոր են հատկապես Խ. Ամիրյանի օսմանագիտության, թուրքագիտության և հայագիտության հատման տիրույթի վիճահարույց հիմնահարցեր լուսաբանող «Թուրքալեզու հայ աշուղներ և Մ. Ֆ. Քեոփրյուլուն», «Սովետական գրականություն», 1976, № 73, Թուրքալեզու հայ աշուղներ (Օսմանյան կայսրություն, XVI-XX դարեր), կազմող՝ Խ. Ամիրյան, Փարիզ, 1993 (Հիշյալ գրքի մասին Վ. Ս. Մաղալյանի գրախոսությունը տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», № 3(93), Երևան, 1997, էջ 193-199):

2008 թ. Երևանի պետական համալսարանում հիմնադրվեց Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որտեղ գործում են հնագիտական հետազոտությունների, Բարկեն Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիաները, ցեղասպանագիտության, հայոց պետականության պատմության հիմնահարցերի հետազոտության, վիրտուալ հայագիտության և տեղակատվության, հայ-վրացական առնչությունների, հայ-օսմանական առնչությունների, հայ-քրդական առնչությունների և սփյուռքագիտական հետազոտությունների բաժինները: Նորաստեղծ ինստիտուտի առանցքային-հիմնարար խնդիրներից էր Հայ-օսմանական պատմական, լեզվական ու մշակութային առնչությունների ուսումնասիրությունը: Վերոհիշյալ բաժնի գիտաշխատողների և ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոսների ջանքերով ստեղծված, ուսանողների ու մասնագետների դատին ներկայացվող սույն գիրքը հայերեն բուհական առաջին դասագիրքն է, որտեղ հաշվի են առնվել հայ ուսանողներին օսմաներենի հնչյունական, քերականական, բառային համակարգերի դասավանդման առանձնահատկությունները, ներկայացվել են այնպիսի համարժեք ձևեր, որոնք չկան ռուսերենում և անգլերենում (մասնավորապես՝ օսմաներենում, ինչպես և թուրքերենում ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջածանց, երբ հայերեն թարգմանության մեջ առկա է որոշյալ առումը)³¹: Հիշարժան է,

³¹ Տե՛ս նաև **Լ. Մահակյան, Ա. Մարգարյան, Ալ. Մաֆարյան**, Օսմաներենի դասավանդման սկզբունքները հայալեզու լսարանում, Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո, Միջազգային գիտաժողով - 4, Երևան, 2016, էջ 58-59, հմմտ

որ թե՛ Խորհրդային Հայաստանում, թե՛ Անկախ պետականության քառորդ դարի ընթացքում համալսարանական արևելագետ-լեզվաբանների կողմից համապատասխան եզրաբանության բյուրեղացման ու դասագրքաստեղծ զգալի աշխատանք է տարվել, հրատարակվել են նաև պարսկերենի, արաբերենի ու թուրքերենի դասագրքեր³² և ձեռնարկներ, որոնք, բնականաբար, օգտագործվել են մեր դասագիրքը կազմելու գործընթացում: Հատկանշական է նաև այն փաստը, որ օսմանագետների պատրաստման մագիստրոսական, ինչպես նաև բակալավրիատում օսմաններենի դասավանդման ծրագրերում հատկապես արդյունավետ է սիրիահայ, լիբանանահայ, պոլսահայ, պարսկահայ ուսանողների արաբերենի, պարսկերենի, թուրքերենի գիտելիքների օգտագործումը:

Սույն դասագիրքը բաղկացած է երեսուներկու դասից (յուրաքանչյուրում ներառված են համապատասխան վարժություններ), օսմաներեն - հայերեն ուսումնական բառարանից, որը կազմելիս առավելապես օգտվել ենք Պետրոս Զեքի Կարապետի վերոհիշյալ արժեքավոր բառարանից: Դասագրքում ներկայացված են նաև տարբեր դարաշրջանների ու տարաբնույթ (այդ թվում՝ արձակ և չափածո ստեղծագործությունների) բնագրերի օրինակներ: Մասնավորապես, ներկայացվում

նաև **Ալ. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազյոզյան**, Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա., վեցերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2015, էջ 34:

³² Մասնավորապես տե՛ս **Գ. Մ Նալբանդյան.**, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1980, **Ք. Վ. Բախշինյան, Հ. Հ. Բիանջյան, Լ. Վ. Ղազարյան, Գ. Վ. Մելիքյան**, Պարսկերենի դասագիրք, Երևան, 2011, **Ս. Կարաբեկյան, Ս. Տոնիկյան**, Գրական արաբերենի ներածական դասընթաց, Երևան, 2014:

են նմուշներ՝ Բաքիի, Նեդիմի, Մեհմեդ Էմինի, Զիյա Գյոքալփի, Յահյա Քեմալի բանաստեղծություններից:

Համահեղինակները դասագրքի ստեղծման գործընթացում աջակցության համար երախտագիտություն են հայտնում խմբագրին, գրախոսներին, ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Արամ Սիմոնյանին, Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամին և անձամբ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լևոն Սարգսյանին, «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամին», ՀՀ Հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի, ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական և ՀՀ Ազգային գրադարանների աշխատակիցներին: Դասագրքի ձեռագրի փորձաքննությանը նպաստելու համար շնորհակալ ենք նաև ԵՊՀ արաբագիտության ամբիոնի վաստակաշատ դասախոս Երվանդ Մինասյանին, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, ք. գ. թ. Լիլիթ Սաֆրասոյանին, ասիստենտ, ք. գ. թ. Անուշիկ Մարտիրոսյանին և դասախոս Մարիամ Մելքոնյանին:

Հեղինակները սպասում են մասնագետների՝ սույն դասագրքի լրամշակմանը նպատակառոտված դիտողություններին և առաջարկներին:

ԴԱՍ ԱՌԱՋԻՆ

§ 1. Օսմաներենի այբուբենը և գրության առանձնահատկությունները (ընդհանուր տեղեկություններ)

Օսմաներենի այբուբենի հիմքում արաբականն է՝ պարսկերենի այբուբենից մի քանի տառերի հավելումով: Այբուբենում առկա է (*Kâf-i Nuni, Sağır Kef, Nazal ñ*) տառն արտացոլում է նաև թյուրքական քմայնացած ñ հնչյունը:

Ուշադրություն դարձրե՛ք այս հիմնական կանոններին.

- Օսմաներենում գրությունն աջից ձախ է:
- Տառերը լինում են միակողմանի և երկկողմանի կցման:
- Բառակցում, բառամիջում և բառավերջում տառերն ունեն տարբեր գրելաձևեր:
- Փոխառությունները, որպես կանոն, պահպանում են արաբերենի և պարսկերենի համապատասխան գրելաձևերը:
- Յուրաքանչյուր ձայնավորի չի համապատասխանում առանձին տառ:
- Արաբերենում գոյություն ունեցող, սակայն թյուրքական լեզուներում բացակայող որոշ բաղաձայն հնչյուններ օսմաներեն այբուբենում պահպանել են միայն գրության ձևը՝ տառը: Արդյունքում՝ մեկ հնչյունն օսմաներենում արտահայտվում է մի քանի տառերով:

Օսմաներենի այբուբենը

ا	ب	پ	ت	ث
Elif	Be	Pe	Te	Se (the)
ج	چ	ح	خ	د
Cim	Çim	Ha	Hı	Dal
ذ	ر	ز	ژ	س
Zel	Re	Ze	Je	Sin
ش	ص	ض	ط	ظ
Şin	Şad	Dad	Tı	Zı
ع	غ	ف	ق	ك
Aydın	Gayın	Fe	Kaf	Kef
ل	م	ن	و	ه
Lam	Mim	Nun	Vav	He
ی				
Ye				

Տառադարձման աղյուսակ

ا (i)	a, ā	ص	ś, ş
ا (i)	a, e, ı, i, u, ü	ض	ž, d', d
ء	'	ط	t, t
ب	b, p	ظ	ž, z
پ	p	ع	'
ت	t	غ	ğ
ث	ś, s	ف	f
ج	c, ç	ق	k, q
چ	ç	ك	k, g
ح	h, ħ	ك	ñ, ñ
خ	ħ	ل	l
د	d	م	m
ذ	z, d	ن	n
ر	r	و	v, û, u, ü, ö
ز	z	ه	h, a, e
ژ	j, ž	ی	y, ı, i, ī
س	s		
ش	ş, š		

Տառերի կապակցման աղյուսակ

Բառա- վերջում	Բառամիջում	Բառա- սկզբում	Անջատ	Տառի անվանումը
ا	ا ا	ا	ا	Elif
ب	ب	ب	ب	Be
پ	پ	پ	پ	Pe
ت	ت	ت	ت	Te
ث	ث	ث	ث	Se
ج	ج	ج	ج	Cim
چ	چ	چ	چ	Çim
ح	ح	ح	ح	Ha
خ	خ	خ	خ	Hı
د	د	د	د	Dal
ذ	ذ	ذ	ذ	Zel
ر	ر	ر	ر	Re
ز	ز	ز	ز	Ze
ژ	ژ	ژ	ژ	Je
س	س	س	س	Sin
ش	ش	ش	ش	Şin
ص	ص	ص	ص	Sad

Բառա- վերջում	Բառամիջում	Բառա- սկզբում	Անջատ	Տառի անվանումը
ض	ض	ض	ض	Dad
ط	ط	ط	ط	Tı
ظ	ظ	ظ	ظ	Zı
ع	ع	ع	ع	Ayın
غ	غ	غ	غ	Gayın
ف	ف	ف	ف	Fe
ق	ق	ق	ق	Kaf
ك	ك	ك	ك	Kef
ل	ل	ل	ل	Lam
م	م	م	م	Mim
ن	ن	ن	ن	Nun
و	و	و	و	Vav
ه	ه	ه	ه	He
ی	ی	ی	ی	Ye

Օսմաներենում երկկողմանի (աջից և ձախից) կապակցվող տառերը կոչվում են «միացվող» կամ «կցելի» (*muttasıl*). դրանք են բոլոր տառերը բացի հետևյալներից՝ ا, د, ذ, ز, ژ, որոնք չեն միանում հաջորդ տառին:

**Ստորև աղյուսակում տրված են օսմաներեն տառերի
կապակցվող և չկապակցվող գրելաձևերը:**

Բառավերջում	Բառամիջում	Բառասկզբում	Անջատ
ا tarla-դաշտ	اا baba- հայր	ا eş- ամուսին/կին	
ب leb- շրթունք	ب bebek-երեխա, տիկնիկ	ب beş-հինգ	ب
پ hep –ամբողջը	پ tepe-գագաթ	پ pazar-շուկա, կիրակի	پ
ت git-զնա՝	ت beter-շատ վատ	ت Türk-թուրք	ت
ث miras-ժառանգություն	ث müsbet/müspet- հաստատված, ապացուցված, դրական	ث eser-նշան, հետք, արդյունք	
ج hac-ուխտագնացություն	ج gice/gece –գիշեր	ج cam-ապակի	ج
چ ağaç-ծառ	چ çiçek-ծաղիկ	چ çok-շատ	چ

Բառավերջում	Բառամիջում	Բառասկզբում	Անջատ
ح	ح	ح	ح
صباح sabah-առավոտ	محكوم mahküm-վճռված, դատապարտված	حق hak-ճշմարտություն, իրավունք	
خ	خ	خ	خ
تاريخ tarih-պատմություն, թիվ	بخت baht-բախտ	خان han- խան	
د	د	د	د
اد ad-անուն	كدر keder-վիշտ, ցավ	دیل dil-լեզու	
ذ	ذ	ذ	ذ
لذیذ lezez-համեղ	مذهب mezhep-ուղի, դավանանք, կրոն. ուսմունք	ذکر zikr-հիշատակում	
ر	ر	ر	ر
بر bir-մեկ	بربر berber-վարսավիր	رب rab/reb-Աստված	
ز	ز	ز	ز
قیز kız-աղջիկ	یازی yazı-գիր, գրություն	زور zor-դժվար	
ژ	ژ	ژ	ژ
بژ bej-բեժ	مژده müjde –ավետիս	ژاله jale-ցող	
س	س	س	س
سس ses-ձայն	انسان insan-մարդ	سن sen –դու	

Բառավերջում	Բառամիջում	Բառասկզբում	Անջատ
ش	ش	ش	ش
بش beş-hինգ	تشکر teşekkür-շնոր- հակալություն	شِب şeb-qիշեր	
ص	ص	ص	ص
رقص raks –պար	قصه kıs-aկարճ	صو su-ջուր	
ض	ض	ض	ض
ارض arz-պահանջ	حضرت hazret-սրբություն, մեծություն, վսեմություն	ضیا ziya-լույս	
ط	ط	ط	ط
خط hat-զիծ	وطن vatan-հայրենիք	طاش taş-քար	
ظ	ظ	ظ	ظ
حافظ hafiz-պահապան, պաշտպան	منظوم manzum-բանա- ստեղծություն	ظفر zafer-հաղթանակ	
ع	ع	ع	ع
جامع cami-մզկիթ	بعض bazı-որոշ	عشق ışk /aşk-սեր	
غ	غ	غ	غ
باغ bağ-խաղողի այգի	اغیر ağır-ծանր	غرب garp-արևմուտք	
ف	ف	ف	ف
صف saf-կարգ	وفات vefat-մահ	فلک felek-ճակատագիր	

Բառավերջում	Բառամիջում	Բառասկզբում	Անջատ
عاشق aşık – սիրահար, աշուղ	عقرب akrep-կարիճ	قار kar-ձյուն	ق
چيچک çiçek-ծաղիկ	اکمک ekmek-hաց	کدی kedi-կատու	ك
گل güzel-զեղեցիկ	گۆملک gömlek-վերնաշա- սլիկ	لب leb-շրթունք	ل
موم mum-մոմ	کمک kemik-նսկոր	مال mal-ապրանք	م
بن ben-էս	آننه anne-մայր	نور nur-լույս	ن
و الو alev-բոց	سوکی sevgi-սեր	ولی veli-տեր, հոգաբարձու	و
دوه deve-նուտ	تتها tenha-ամայի	هر her-յուրաքանչյուր	ه
ی ای ay-արջ	یشیل yeşil-կանաչ	یاش yaş-տարիք	ی

ԴԱՍ ԵՐԿՐՈՐԴ

§ 2. 1 1 1 1 (*Elif*) տառի գրության և արտասանության կանոնները

1 տառը միակողմանի կապակցվող է. բառասկզբում գրվում է՝ 1, բառամիջում՝ և, բառավերջում՝ և: 1 գրվում է տողի վրա:

Օսմաներենում յուրաքանչյուր տառ ունի իր թվային արժեքը (**ا**, **۱**), **ه** (elif)-ն արտահայտում է «1» մեկ թիվը:

Լ-ն ունի արտասանության հետևյալ տարբերակները՝ a-ä, e-ä, u-ü, i-1.

- 1) բառասկզբում, բառամիջում և բառավերջում արտասանվում է որպես [a] ձայնավոր: Օրինակ՝ **اتش (ateş)** - կրակ, **درحال (derhal)** – իսկույն, անմիջապես, **بابا (baba)** - հայր.
- 2) Լ-ն արաբապարսկական փոխառյալ բառերում բառասկզբում արտասանվում է որպես [i], [i] ձայնավոր: Օրինակ՝ **اعتراض (itiraz)** - մերժում, **اختیار (ihtiyar)** - ծեր, **اسکله (iskele)** - կայարան, **اصرار ایتمک (ısrar etmek)** – պնդել.
- 3) Լ-ը բառասկզբում արտացոլում է նաև [e] ձայնավորը: Օրինակ՝ **افندی (efendi)** - պարոն (ղիմելաձև), **1. اک (en), 2. (ek)** 1.ամենա, 2. վերջածանց, **اشیا (eşya)** - իրեր - հոգ. թիվ **شی (sey)** - իր.

- 4) ¹ -ը միայն փոխառյալ բառերի բառասկզբի դիրքում (մասնավորապես արաբական ծագման բառերում) արտասանվում է [u], [ü] ձայնավոր: Օրինակ՝ **أصول (usûl)** - մեթոդ, **أسلوب (üslup)** - ոճ, **الف (ülfet)** - ընկերություն, սիրալիություն, **أُمِد (ümit)** - հույս:

§ 3. Ձայնանիշեր (հարեքներ)

Օսմաներենում առկա է կարճ և երկար ձայնավորների տարբերակումը՝ ըստ որի երկար ձայնավորները գրվում են, իսկ կարճերը՝ ոչ: Բառերը ճիշտ ընթերցելու համար օգտագործվում են **հարեքե** կոչվող օժանդակ նշանները: Ժամանակի ընթացքում՝ օսմաներենի ուղղագրական կանոնների ամրապնդմանը զուգընթաց, այս նշանների կիրառությունը նվազեց, և վերջիններս սկսեցին օգտագործվել միայն բառարաններում, լեզվաբանական աշխատություններում և այլ օժանդակ գրքերում:

Օսմաներեն բառերում ¹-ն արտահայտում է **[a]** և **[e]** ձայնավորները: Դրանց տարբերակման համար բառասկզբում օգտագործվում է ~ **մեդ (մադդա)** կոչվող ձայնանիշը, որն արտահայտում է հետնալեզվային **[ā]** երկար ձայնավորը: Օրինակ՝ **أَت (at)** - ձի, **آدَام (adam)** - մարդ, **أَش (aş)** - ուտելիք, **أَو (av)** - որս:

§ 4. Հեմզեի (ء) կիրառությունը

Արաբերենին բնորոշ է յուրատեսակ կոկորդային պայթյունը, որն արտահայտվում է հատուկ նշանով և կոչվում «*հեմզե*»՝ ء: *Հեմզեն* դրվում է ¹ (elif), و (vav) և ى (ye) տառերի վրա: Էլիֆ-հեմզե ունեցող արաբական փոխառություններն օսմաներենում հաճախ կորցրել են հեմզեն՝ պահպանելով միայն ձայնավորի բնույթը: Օրինակ՝ أَحَبَّاب (ahbāb) - ընկերներ, سُؤَال (su'āl) - հարց, فَائِدَة (fāi'da) - օգուտ: *Հեմզեն*, ինչպես ցանկացած արաբերեն բաղաձայն հնչյուն, ուղեկցվում է ձայնավոր հնչյուններով: Եթե բառակցքում *հեմզեն* հանդես է գալիս *էս-թենով*, որն արտահայտում է [i] հնչյունը, ապա այն դրվում է ¹ – ի տակ, օրինակ՝ إِخْرَاج (ihrāc) - արտահանում: (*մանրամասն տե՛ս* § 6.):

Օսմաներենում առկա արաբական փոխառություններում *հեմզեն* կարող է պահպանվել նաև բառամիջում: Օրինակ՝ تَأْثِير (te'sir) - ազդեցություն, تَأْكِيد (te'kid) - հաստատում: Երբեմն *հեմզեի* կոկորդային պայթյունի հետ կիրառվում է նաև ձայնավոր վանկի երկարացում, օրինակ՝ تَأْسِيس (te'sis) - հիմք: Արաբերեն բառերում հեմզեն հանդես է գալիս առանձին՝ սովորաբար երկար ձայնավորից հետո, օրինակ՝ دُعَا (dua) – աղոթք, شَيْء (sey)-իր: Այդպիսի փոխառություններում կոկորդային պայթյունը հիմնականում անհետացել է, բայց գրության ժամանակ հեմզեն կարող է պահպանվել՝ գրվելով دُعَا, شَيْء և առանց հեմզեի دُعَا, شَيْء:

Օսմաներենի ուղղագրությունում *հեմզեն* կիրառվում է պարսկական իզաֆեթներում (գոյականական կապակցություններում) (*մանրամասն տե՛ս* § 72), այն դեպքում, երբ իզա-

Ֆեթի առաջին անդամը՝ ձայնավորով ավարտվող որոշիչ է **نامه** **name-i Hünkār** - սուլթանի/ կայսեր նամակը:

Բառարան

آت (at) - ձի	اميد (ümit) - հույս
آتش (ateş) - կրակ	او- (av) - որս
أحباب (ahbāp/-bı) - ընկերներ	اختيار (ihtiyar) - ծեր
إخراج- ihrāc - արտահանում	آدام (adam) - մարդ
اصرار ايتmek (ısrar etmek) - պնդել	بابا (baba) - հայր
اسکله (iskele) - կայարան	تأثير (te‘sir) - ազդեցություն
اسلوب (üslup) - ոճ	اشيا (eşya) - իրեր (եզ. թիվ شى (şey)
افندی (efendi) - պարոն (դիմելաձև)	اک 1. (en), 2.(ek)-1. ամենա,
	2. վերջածանց
آش (aş) - ուտելիք, ճաշ	سؤال (su‘āl) - հարց
تأكيد (te‘kid) - հաստատում	تأسيس (te‘sis) - հիմք
درحال (derhal) - միանգամից	اعتراض (itiraz) - դիտողություն,
	առարկություն
دُعا (dua) - աղոթք	اصول (usûl) - մեթոդ
فائدة (fāi‘da) - օգուտ, շահ	الفت (ülfet) - ընկերություն
نامه خنکار (name-i Hünkār) - սուլ-	
թանի / կայսեր նամակը	

ԴԱՍ ԵՐՐՈՐԴ

§ 5. Բ Բ Բ Բ (Be) տառի գրության և արտասանության կանոնները

Բ տառն ունի երկկողմանի կապակցում. գրությունը՝ բառակցում՝ Բ, բառամիջում՝ Բ, բառավերջում՝ Բ: Տառի հիմնական մասը գրվում է տողի վրա: Բ տառն արտահայտում է [b] հնչյունը, իսկ բառավերջում, կցվելով խուլ բաղաձայններին, արտահայտում է [p] հնչյունը: Թվային արժեքը՝ «2»: Օրինակ՝ Բ (ā¹b) - ջուր, Բ (bā) - բա, ԲԲ (ābb) - աբբ, ԲԲ (bābā) - հայր, ԲԲ (bāb) - դուռ:

§ 6. Ձայնանիշեր (հարեքներ)

Օսմաներենի ճշգրիտ ընթերցանության կարևոր ձայնանիշերից են հետևյալները՝

◌ Üstün (արաբ. **fetha**) - դրվում է տառի վրա և արտահայտում է /a/, /e/ ձայնավորները՝ Բ

◌ Ötre (արաբ. **zamme /damme**) - դրվում է տառի վրա և արտահայտում է /o/, /ö/, /u/, /ü/ ձայնավորները՝ Բ

◌ Esre (արաբ. **kesre**) - դրվում է տառի տակ և արտահայտում է /ı/, /i/ ձայնավորները՝ Բ

¹ ā արտահայտում է երկար ¹ ձայնավորը:

Վարժություններ

1. Հետևյալ բառերը գրե՛լ օսմանատառ:

bābā _____

āb _____

bāb _____

bbā _____

2. Հետևյալ տառային կապակցությունները գրե՛լ օսմաներեն՝ տեղադրելով ձայնանիշերը:

Ba_____, bo_____, be_____, bu_____,
bi_____, bü_____, bī_____, bö_____, āb_____,
eb_____.

3. Գրե՛լ հետևյալ տառերի համատասխան թվանիշը:

ا _____, ب _____, ت _____

Բառարան

آب (āb) - ջուր

باب (bābā) - հայր

باب (bāb) - դուռ

ԴԱՍ ՉՈՐՐՈՐԴ

§ 7. ت ت ت ت (Te) տառի գրության և արտասանության կանոնները

Շնչեղ խուլ ت [t] հնչյունն օսմաներենում իր գրության ձևով նման է ب/ه, այն տարբերությամբ, որ ت տառի հիմքի վրա դրվում է երկու կետ, կապակցումը երկու կողմից է: Գրվում է տողի վրա և ունի գրության հետևյալ ձևերը՝ բառասկզբում՝ ت, բառամիջում՝ ت, բառավերջում՝ ت: Թվային արժեքը՝ «400»: Օրինակ՝ آت (āt) - ձի, ات (et) - միս, بات (bāt) - վերջնական, կտրուկ, بت (bet) - դեմքի գույն, تب (teb) - տենդ, تاب (tāb) - կարողություն, ուժ, համբերություն, تات (tāt) - համ, آتآ (ātā) - հայր, պապ, նախահայր, بیت (ինչպես նաև بیت) (bit) – ոջիլ:

Վարժություններ

1. Հետևյալ բառերը գրե՛լ օսմանատառ:

tāb _____
bet _____
tāt _____
ātā _____
āt _____
bit _____
bet _____

teb _____
et _____

Բառարան

آت (āt) – ձի

بات (bāt) - վերջնական, կտրուկ

بيت (ինչպես նաև بیت) (bit) - ոջիլ

تات (tāt) - համ

تب (teb) - տենդ

أت (et) - միս

بَت (bet) - դեմքի գույն

آتا (ātā) - 1. հայր, 2. պապ, 3. նա-
խահայր

تاب (tāb) - կարողություն, ուժ,
համբերություն

ԴԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

§ 8. ڊ ڊ ڊ ڊ (Dal) տառի գրության և արտասանության կանոնները

ڊ միակողմանի կցվող տառ է: Գրվում է տողի վրա և ունի գրության հետևյալ ձևերը՝ բառասկզբում՝ ڊ, բառամիջում՝ ڊ, բառավերջում՝ ڊ: Թվային արժեքը՝ «4»: Օսմաներեն բառերում ڊ արտահայտում է [d] ձայնեղ հնչյունը: Օրինակ՝ ڊ (bad) - քամի, ڊ (bed) - վատ, ڊ (edeb/edep) - նրբանկատություն, բարեկերթություն, ڊ (adab/ adap/-bi) - ավանդույթ, կարգ, ڊ (ad) - անուն:

Վարժություններ

1. Հետևյալ բառերը գրե՛լ օսմանատառ:

ād _____
āb _____
bād _____
bed _____
edeb _____
ādāb _____

2. Հետևյալ թվանիշները գրե՛լ օսմանատառ:

4_____, 1_____, 2,_____:

Բառարան

عَدَب (edeb/edep) - նրբանկատություն, բարեկրթություն	آداب (adab/adap/-bi) - ավանդույթ, կարգ
أَد (ad) - անուն	بَد (bed) - վատ
بَد (bad) - քամի	

ԴԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

§ 9. ر ر ر ر (Re) տառի գրության և արտասանության կանոնները

ر տառը միակողմանի կապակցվող է: Ունի գրության հետևյալ ձևերը՝ բառասկզբում՝ ر , բառամիջում՝ رر, բառավերջում՝ تر: Տառի առաջնային մասը գրվում է տողի վրա: Համապատասխանում է ձայնորդ [r] հնչյունին: Թվային արժեքը՝ «200»: Օրինակ՝ ر (rā), رَب (reb, rab) - Աստված, دار (dār) - նեղ, بیر (bir) - մեկ, بار (bār) - բեռ, պտուղ, تار (tār) - թել, լար, մուր, առեջ, رَد (red) - հեռացում, վանում, մերժում, آرا (āra) - միջև, մեջ, ار (er) - զինվոր, برابر (berāber) - միասին, بiber (biber) - պղպեղ, نرت (dört) - չորս, درد (dert) - վիշտ, برد (berd) - ցուրտ, بر باد (berbād) - աղտոտ, ավերված, برادر (birāder) - եղբայր:

Ի տարբերություն ժամանակակից թուրքերենի՝ օսմաներենում չի գործում ձայնավորների ներդաշնակության և բաղաձայնների առնմանության¹ օրենքը: Այսպես օրինակ՝ անվանական ստորոգյալ կազմող եզակի թվի երրորդ դեմքի -**dir/-dir**, -**dur/-dür**, -**tir/-tir** -**tur/-tür** ստորոգման ածանցներն արտահայտվում են در հնչյունական կապակցությամբ՝ անկախ բառահիմքի վերջին վանկի ձայնավորից և բաղաձայնից: Օրինակ՝ آتدر – (սա) ձի է, اردر – (սա) զինվոր է:

¹ Եթե խուլ բաղաձայնով վերջացող բառին կցվում է ձայնեղ բաղաձայնով սկսվող ածանց, ապա խուլ բաղաձայնի ազդեցությամբ ձայնեղ բաղաձայնը խլանում է: Այս երևույթը կոչվում է բաղաձայնների առնմանություն:

§ 10. Չայնանիշեր (հարեքներ)

Օսմաներենի ճշգրիտ ընթերցանության կարևոր ձայնանիշերից է **cezm** (արաբ. **sükûn**)-ը: Այն դրվում է տառի վրա, և ցույց է տալիս տառին հաջորդող ձայնավորի բացակայություն: Օրինակ՝ **بَرْد** (**berd**) - ցուրտ, **بَرْبَاد** (**berbad**) - աղտոտ, ավերված:

Վարժություններ.

1. Հետևյալ բառերը և նախադասությունները գրե՛լ օսմանատառ ու թարգմանե՛լ:

ābār _____
bir _____
dört _____
biber _____
berāber _____
er _____
dert _____
red _____
rab _____
bar _____
tar _____
berbād _____
birāder _____
berd _____

Adam berberdir. _____
Erdir. _____

Attir. _____
 Biberdir. _____
 Berddir. _____
 Dört biraderdir. _____

Բառարան

أر (er) - զինվոր	برابر (berāber) - միասին
آرا (āra) - միջև, մեջ	برباد (berbād) - 1. աղտոտ, 2. ավերված
بار (bār) - բեռ, պտուղ	دُرت (dört) - չորս
برادر (birāder) - եղբայր	درد (dert) - վիշտ
تار (tār) - 1. թել, 2. լար, 3. մուր, 4. առէջ	بیر (bir) - մեկ
دار (dār) - նեղ	بیر (biber) - պղպեղ
رب (reb, rab) - Աստված	برد (berd) - ցուրտ
رد (red) - 1. հեռացում, վանում, 2. մերժում	

ԴԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ

§ 11. و و و (Vav) տառի գրության և արտասանության կանոնները

Արաբերենում و-ն արտահայտում է շրթնատամնային [v] բաղաձայն կամ շրթնային նեղ ձայնավոր [ü] հնչյունները: Թվային արժեքը՝ «6»: Օսմաներենում و -ն օգտագործվում է հետևյալ հնչյուններն արտահայտելու համար.

1. շրթնատամնային [v]

وار (var) – կա, او (av) – որս, او (ev) – տուն, وارید (varid/varit/-di) – հասնող, եկող, وبا (veba) – ժանտախտ, համաճարակ, دور (devr/ devir) – փուլ, ժամանակահատված, դարաշրջան, اوت (evet) – այր:

2. բառամիջում և բառավերջում շրթնային [o], [ö], [u], [ü] ձայնավորներ

بو (bu) – սա, այս, دور (dur) – կանգնի՛ր - «կանգնել» բայի հրամայական եղանակի երկրորդ դեմքի եզակի թիվ, بورا (bora) – մրրիկ, փոթորիկ, توت (tut) – թուրթ, توت (tüüt) – ծխի՛ր, «ծխել» բայի հրամայական եղանակի երկրորդ դեմք եզակի թիվ, دور¹ (dört) – չորս:

Բառասկզբում ا և و համակցումն արտահայտում է շրթնային հետևյալ ձայնավորները. او- [o], [ö], [u], [ü]: Օրինակ՝ اود (ինչպես նաև՝ اوت) (od) – կրակ, اوت (ot) – խոտ, اوت (öt) – երգի՛ր, դայլայլի՛ր, «երգել» բայի հրամայական եղանակի

¹ Հաճախ հանդիպում է նաև دور գրությամբ:

երկրորդ դեմքի եզակի թիվ, اور (ur-vur) - խփի՛ր (հրամ. եղ.) اوتو (ütü) - արդուկ և այլն:

Մեթ. *Բառակցքի շրթնային ձայնավորը միայն /-ով արտահայտվում է նմանօրինակ բառերում՝ اردو (ordu) - բանակ, اغور (uğur) - երջանկություն, հաջողություն, բախտ:*

Վարժություններ

1. Տառադարձե՛լ հետևյալ բառերն ու թարգմանե՛լ հայերեն:

وار	اوت	دود	اوداء	دوات	ار
دود	دوار	بوبو	بوار	رود	روبا
تاب	اورتو	تورات	اردو	اوتو	دور

2. Հետևյալ կապակցությունները գրե՛լ օսմանատառ:

dö	tö	do	tu	bö
tü	tut	du	ru	vu
bu	o	bo	öt	üt
vur	tör	ör	tüt	vö

3. Հետևյալ նախադասությունները գրել օսմանատառ և տեղադրել ձայնանիշերը.

Bu evdir. _____
Ev berbaddır. _____
Ab vardır. _____
Davet vardır. _____
Ordu vardır. _____
O oturur. _____
Ütüdür. _____

Բառարան

آ (av) - որս	اوت (öt) - երգի՛ր, դայլայլի՛ր, (հրամ. եղ.)
أ (ev) - տուն	اردو (ordu) - բանակ
أوت (evet) - այո	اغور (uğur) - 1. երջանկություն, 2. հաջողություն, բախտ
اوت (ot) - խոտ	اورتو (örtü) - ծածկոց
اود / اوت (od) - կրակ	بوار (bevar) - կործանում, ավերում
بو (bu) - սա, այս	دور (dur) - կանգնի՛ր (հրամ. եղ.)
بورا (bora) - մրրիկ, փոթորիկ	دود (dud) - 1. (պ.) ծուխ, մուխ, 2. (ար.) որդ
توت (tut) - թուրթ	اوداء (evidda) - բարեկամներ, մտերիմներ

توت (tüt) - ծխի՛ր (հրամ. եղ.)

تورات (Tevrat) - 1. Աստվածաշունչ,
2. Հնգամատյան, 3. Հին կտակա-
րան

دورت/دورت (dört) - չորս

وبا (veba) - 1. Ժանտախտ, 2. համա-
ճարակ

روبا (rubá) - հագուստ, զգեստ

وار (var) - կա

وارد (varid/varit/-di) - հասնող, եկող

دوات (devat) - թանաքաման

بویو (bubu) - հոպոս

دوار (devar/duvar) - գլխապտույտ

رود (rud) - գետ

اور (ur-vur) - խփի՛ր (հրամ. եղ.)

اوتو (ütü) - արդուկ

دور (devr/devir) - 1. փուլ, ժամա-
նակահատված, 2. դարաշրջան

ԴԱՍ ՈՒԹԵՐՈՐԴ

§ 12. ل ل ل ل (Lâm) տառի գրության և արտասանության կանոնները

Այս տառն օսմաներենում արտահայտում է ձայնորդ [l] հնչյունը: ل տառն ունի երկկողմանի կապակցում. բառասկզբում لب, բառամիջում بلى, բառավերջում بال: Տառն իր գրությամբ համապատասխանում է /-ի բարձրությանը: ل-ը գրվում է տողի վրա, սակայն բառավերջում և առանձին գրության դեպքում տառի ներքևի հատվածն իջնում է տողից ներքև՝ بل: /-ի և ل համակցումը հիմնականում գրվում է այսպես՝ لا: Թվային արժեքը՝ «30»: Օրինակներ՝ ابلا (abla) - ավագ քույր, بال (bal) - մեղր, بلب (bülbü) - սոխակ, تارلا (tārā) - դաշտ, بول (bül) - գտի՛ր («գտնել» բայի հրամ. եղ. երկրորդ դեմքի եզ. թիվ), بول (böl) - բաժանի՛ր (բաժանել» բայի հրամ. եղ. երկրորդ դեմքի եզ. թիվ), لب (leb) - շրթունք, دل (dil) - սիրտ, دلبر (dilber) - գեղեցկուհի, սիրելի, սրտակեր, دلالت (delālet) - ապացույց, دلال (delāl) - միջնորդ, دلاور (delāver) - քաջ, դուրսագն, կտրիճ, دلدار (dildār) - սիրուհի, دل (dāl) - ապացույց, ճյուղ:

§ 13. Չայնանիշեր (հարեքներ)

Օսմաներենի ճշգրիտ ընթերցանության կարևոր ձայնանիշերից է օ şedde-ն (արաբ. teşdit), որը դրվում է արաբական

ծագման բառերում կրկնակի բաղաձայնն արտահայտելու համար: Օրինակ՝ **اُۆ** (evvel)¹ - առաջ: Թյուրքական ծագման բառերում կրկնակի բաղաձայնները գրվում են երկու տառով, ձայնանիշը չի դրվում: Օրինակ՝ **بلى** (belli) - հայտնի, **الى** (elli)- հիսուն: Տպագիր տեքստերում *շեղդեն* մեծ մասամբ չի օգտագործվում: Եթե բառի վերջին հնչյունը **ۆ** է կրում, ապա տվյալ տառը կրկնակի չի կարդացվում. **سِر** (sir) - գաղտնիք, **فَن** (fen) - գիտություն, **حَق** (hak) - իրավունք, **حَس** (his) - զգացմունք և այլն: Երբ արաբական ծագման այս բառերը ստանում են ձայնավորով սկսվող վերջածանց, **ۆ** կրող բաղաձայնները հնչում են կրկնակի. **sırri** - գաղտնիքը, **fennî** - գիտական, տեխնիկական, **hakkı** - իրավունքը, **hissi** - զգայական և այլն:

§ 14. Հոգնակերտ վերջածանցի գրությունը

Օսմաներենում թուրք. հոգնակերտ -lar, -ler ածանցներն արտահայտվում են **اِر** տառակապակցությամբ: Օրինակ՝ **اِرلر** (erler) - զինվորներ, **اِرلر** (evler) - տներ, **اِتِلر** (atlar) - ձիեր, **اِرلارلر** (tarlalar) - դաշտեր:

¹ **اول** տառակապակցությունն օսմաներենում ընթերցվում է հետևյալ ձևերով. **اول** (ol) - եղի՛ր (հրամ. եղ.), **اول** (öl) - մեռի՛ր (հրամ. եղ.), **اُۆ** (evvel) - առաջ, և **اول** - (ol) - այն (ցուց. դեր.):

Վարժություններ

1. Գրե՛լ հետևյալ բառերի օսմաներեն տարբերակը:

bal _____
tarlalar _____
adamlar _____
dil _____
leb _____
delālet _____
atlar _____
tel _____
telāl _____
televüt _____
evvel _____
bul _____
bel _____
belādet _____
belād _____
belli _____
belür _____
beled _____
delāl _____
delāver _____
veled _____
velādet _____
dildār _____
dāllar _____
ol _____

2. Թարգմանե՛լ հետևյալ նախադասությունները:

بو اودر. دلالت بودر. تارلالر وار. ارلر دلاوردرلر. بو ادام دلاوردر. تارلالريربادر.
او دلبردر.

Բառարան

ابلا (abla) - ավագ քույր

1. اول (ol) - եղի՛ր (հրամ. եղ.), 2. اول (öl) -
մեռի՛ր (հրամ. եղ.) 3. اۆل (evvel) - առաջ,
4. اول (ol) - այն (ցուց. դեր.)

بال (bal) - մեղք

ببل (bülbü) - սոխակ

بول (bö) - բաժանի՛ր (հրամ. եղ.)

بول (bül) - գտի՛ր (հրամ. եղ.)

حسن (his/-ssi) - զգացմունք

دلاور (delāver) - քաջ, դյուցազն, կտրիճ

دلبر (dilber) - 1. գեղեցկուհի, սիրելի,

2. սրտակեր

فن (fen) - գիտություն, արվեստ

لب (leb) - շրթունք

دلالت (delāl) - միջնորդ

دلدار (dildār) - սիրուհի

دلالت (delālet) - ապացույց

تارلا (tārā) - դաշտ

اللي (elli) - հիսուն

دل (dāl) - 1. ապացույց,

2. ճյուղ

حق (hak/-kki) - իրավունք

بلي (belli) - հայտնի

دل (dil) - սիրտ

سر (sir/rri) - գաղտնիք

ԴԱՍ ԻՆՆԵՐՈՐԴ

§ 15. م م م م (Mim) տառի գրության և արտասանության կանոնները

Այս տառն արտահայտում է [m] հնչյունը: Այն կապակցվում է երկու կողմից՝ հետևյալ կերպ. բառասկզբում՝ مال, բառամիջում՝ تمّل, բառավերջում՝ ألم: Թվային արժեքը՝ «40»: Օրինակներ՝ دم (dem) - շունչ, պահ, مامور (memur) - պաշտոնյա, ծառայող مار (mār) - օձ, آلت (ālet/ ālt) - գործիք, տակ, ստորին, المادّم (almādım) - չվերցրեցի, مال (māl) - ապրանք, آدم¹ (ādām¹) - մարդ, تمّل (temel) - հիմք, مراد (murād) - ցանկություն, موم (mūm) - մում, دام (dām) - որդայթ, ծուղակ, թակարդ, دوام (devām) - շարունակություն, آمر (amir) - ամիր, հրամայող, գլխավոր պաշտոնյա, ملّت (millet) - ազգ:

§ 16. م տառի կիրառությունը քերականական գործառույթներում

م-ի գրությամբ արտահայտվում է առաջին դեմքի եզակի թվի պատկանելության ածանցը: Օրինակներ՝ آتم (atım) - իմ ձին, آدم (adım) - անունս, اوم (evim) - տունս, بام (babam) - հայրս, تارلام (tarlam) - իմ դաշտը:

¹ آدم (ādām) բառն ունի գրության նաև ادام տարբերակը:

«م» գրությամբ արտահայտվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի առաջին դեմքի եզակի թվի ստորոգման ածանցը (մանրամասն տե՛ս «Տասնչորսերորդ դաս»): Անկախ բառի վերջին վանկի ձայնավոր (-ı, -i, -u, -ü) կամ բաղաձայն (d-t) հնչյունների փոփոխությունից՝ այս վերջածանցի գրությունն անփոփոխ է: Օրինակներ՝ **آلدم (aldım)** - ես վերցրեցի, **آتدم (attım)** - ես գցեցի, **اولدم (oldum)** - ես եղա, **بولدم (böldüm)** - ես բաժանեցի:

Վարժություններ.

1. Հետևյալ բառերն ու նախադասությունները գրե՛լ օսմանատառ:

Armut _____
 Mor _____
 Dam _____
 Dem _____
 Durmadım _____
 Mum _____
 Madam _____
 Mader _____
 Mar _____
 Murad _____
 Millet _____
 Evim _____
 Mumum _____
 Ölüm _____
 Er oldum. _____
 Atlarım budur. _____
 Bu memurdur. _____

Tarlam budur. _____

Milletim budur. _____

Arabam odur. _____

Baba araba arar. _____

Babam amirdir. _____

Murad dur. _____

Malım budur. _____

Memur oldum. _____

Tatardır. _____

Alet budur. _____

Ümmet. _____

Millet. _____

2. Հնարե՛լ ճիշտ գույգը:

دال	tarla
مراد	mar
مار	memur
لب	leb
دلبر	dilber
دلدار	madam
مامور	murad
مادام	mermer
ارلر	dal
تارلا	alem
بول	armut
ارمود	erler
مور	mor
مرمر	dildar
آلم	bul

3. Հետևյալ բառերը թարգմանել հայերեն:

آب	امر	داماد	امّت
الم	اوت	آبلا	آل
ملّت	آرا	تاتار	ادا

Բառարան

دم (dem) - 1.շունչ, 2.պահ

مار (mār) - օձ

مillet (millet) - ազգ

آرمود (armut/-du) - տանձ

آدم/ آدم (adam) - մարդ

تمل (temel) - հիմք

مراد (murad) - ցանկություն

الم (alim) - 1.գնում, 2. տեսողություն

دوام (devam) - շարունակություն

موم (mum) - մոմ

آمر (amir) - ամիր, հրամայող, գլխավոր պաշտոնյա

مور (mor) - մանուշակագույն

مامور (memur) - պաշտոնյա, ծառայող

آلت (alet) - գործիք

آلت (alt) - տակ, ստորին

مال (mal) - ապրանք

مور (mur) - մրջյուն

